

պէտք է ստուերատունէն հանել ու փոխադրել երրորդ տուփի մը մէջ: Եւ տուփին մէջ յառաջագոյն պատրաստուած ըլլայ ամանով սնդիկ, որուն տաքութիւնն ըլլայ 11-է-12 Գրմիւրի ջերմաչափով 70 աստիճան: Երծաթի թիւթեղը պէտք է սնդիկի ամանի բերնին վրայ դնել, որ սնդիկի գոլոշին զարնէ թիւթղան վրայ. բայց գլխաւոր գիտելիքն աս է որ սնդիկի գոլոշին ուղղահայեաց պէտք չէ զարնէ թիւթղան երեսին, հապա անկիւնաբար՝ 45 աստիճանի չափ ծռած:

Ե. Եւ գլխաւոր գործողութիւններէն ետքը վերցընելու է անկէ թիւթեղը, ու թիւթու ջրի մէջ զգուշութեամբ ընկղմելէն ետքը՝ անուշ ջրով ալ ցօղելու է:

Սովորական գործողութիւնն այսչափ է, և գլխաւոր նիւթն ալ իրոտն է. բայց շատ բնալոյծներ այլևայլ եղանակաւ կ'ընեն մի և նոյն գործողութիւնը, և իրոտի տեղ ալ կը գործածեն պրոմ կամ քլոր:

Ար և իցէ կերպով ալ տպաւորուած պատկերը մէկը տեսնելու ըլլայ կը զմայլի. ինչ ճշդութիւն, ինչ բարակութիւն, և ինչ բնական համեմատութիւն: Եւ արկաններուն ու տեսարաններուն ան կտորուանքն որ աչքի չեն երևնար իրենց պզտիկութեան կամ հեռաւորութեանը համար, աս պատկերին մէջ ճիշդ օրինակուած կը գտնենք. ինչուան հեռու կեցած տուներուն վրայ եղած գամերը, տախտակներուն ճեղքուածքը, բոյսերուն մանր ծիւրերը, տերևներուն բարակ ջղերը, մարդու կերպարանքին վրայ անտեսանելի գրծերը, զգեստին ամենաբարակ կտորը տուածքը, և լաթերուն թելերն ու բարակ մազերը աս պատկերին վրայ տպաւորուած կը գտնենք. և ան աստիճան բարակ կերպով որ պարզ աչքով ալ գրեթէ չեն երևնար պատկերին վրայ, հապա մանրացուցով պէտք է մարդ գիտէ, որ զարմանայ ու զուարճանայ: Հիմա կը մնայ ըսել թէ

ինչ կերպով և ինչ պատճառով կը տպաւորուի տակերեան նկարը:

Իրենք բնագէտներն ալ կը խոստովանին թէ նաև աս գործողութեան մէջ երևցած քիմիական գաղտնեաց խելքերնին չհասնիր. բայց ընդհանրապէս ասանկ կը մեկնեն: Թիւթեղը ստուերատան մէջ կեցած ատենը երբ որ դրսի աւարկայի մը լուսաւոր ճառագայթները կը զարնէ անոր վրայ, լուսաւոր տեղուանքը եղած իրոտին մասունքը կը ցնդին, իսկ շուք կամ մութ մնացած տեղուանքը ամենևին չեն ցնդիր. անոր համար երբոր սնդիկի վրայ կը բռնուի նոյն թիւթեղը, սնդիկի գոլոշին կ'երթայ կը միանայ արծաթին հետ. անով ճերմը կած տեղուանքը փայլուն ճերմկութիւն մը կ'առնեն, իսկ սև մնացած տեղուանքը իրոտը արծաթին հետ կը կպցընէ. թիւթու ջրով լուացումն ալ անոր համար է որ արծաթին հետ չկպած իրոտը բոլորովին ելլէ: Բայց թէ սնդիկին գոլոշին ինչո՞ւ անկիւնաբար զարնելով պատկերը կը ձևանայ, դեռ ինչուան հիմա աղէկ մեկնութի մը չեն կրցած տալ բնագէտները: Սակայն ընդհանրապէս ամէնն ալ կը հաւանին ըսելու, թէ աս գործողութեան ներքին պատճառը պիտի ըլլայ ելեքտրականութիւնը:

Յուսանք որ բնագէտներուն անխոնջ աշխատութեամբը դեռ շատ դիւրանայ տակերատիպնկարքին գործելուն կերպը, որպէս զի ասանկօգտակար գիւտը ամէնքը կարենան վայելել ու գործածել:



Ստուերատան:

ՍՏՈՒԵՐԱՏՈՒՆ կ'ըսուի ան գործին, որով ցորեկ ատեն հեռու կեցած տեսարաններն ու պատկերները կ'օրինակուին: Վործին աս սկզբամբ

1 Խ. Camera oscura.

չինած է որ եթէ բնակարան մը բուրովին մթնցնեն, ու պատուհանի փեղկին վրայ բթաչափ տրամագծով կլոր ծակ մը թողու, դրսի առարկային վրայէն լուսոյ շառաւիղները ծակէն ներս կը զարնեն, և կը ձեանայ երկու նման կոնոնաձև՝ իրենց գագաթէն իրարու հետ միացած. մէկուն խարխիսն է առարկային մեծութիւնը, մէկային խարխիսը մութ բնակարանին մէջ զարկած պատկերը: Եւ շառաւիղներուն դիմացը թէ որ թուղթ բռնես, դրսի առարկային պատկերը հոն երևութացած կը տեսնես աղօտ կերպով մը, ու գլխիվար դրբով: Գլխիվար երևնալուն պատճառը ուրիշ տեղ կը զուրցենք: Իսկ թէ որ ծակին բերանը ոսպնաձև ապակի մը դրուի, աս պատկերը աւելի պայծառ կը տեսնուի, ու դրսի առարկային գոյներն ալ որոշ: Եւ յաջափը իմանալէդ ետքը պիտի գիտնաս որ Ստուերատուն ըսուած գործին ալ ասոր նման է. այսինքն արկղ մըն է չորս դին գոց, և մէջը մութ. միայն ասոր վրայէն ուղղահայեաց խողովակ մը դրած է որ պէտք եղած ատեն կրնայ ներս դուրս մտնել ու ելլել. և որպէս զի ներս զարկած պատկերը գլխիվար չըլլայ, խողովակին բերնի ոսպնաձև ապակիին դրսի դին դրուած կ'ըլլայ պզտիկ հայլի մըն ալ: Ուստի տեսարան մը օրինակելու ատենդ պէտք է հայլին երեսը առարկային դարձնես անկիւնաբար, որ անոր պատկերը նախ հայլին մէջ զարնէ, ու անկէ ցոլանայ ոսպնաձևին վրայ, անկէ ալ ներս զարնէ ուղիղ դրբով: Գործիքին գլխաւոր բանը աս է. ասկէ զատ՝ սնտուկին մէկ դին ալ երկու ծակ կայ չափաւոր մեծութեմ, ու պզտի վարագոյրներով պաշտպանուած է որ ներս լոյս չծագէ. անոր համար են ասոնք որ նկարիչը մէկ ծակէն ներս նայի ու առարկային հեռաւորութիւնը համեմատ ոսպնաձևին խողովակը վեր վաք ընելով՝ դրբին յարմարցնէ, և մէկալ ծա-

կէն ձեռքը ներս խոթէ, ու երեցած պատկերին վրայէն կապարագրով կամ ներկով նկարէ:

Եւ վախէ՛ անունով համբաւաւոր տեսաբանը հնարք մը մտածեց հայլին ու ոսպնաձևին տեղը լեցնելու. այսինքն եռանկիւնի հատուածակողմ մը շինեց, որուն մէկ երեսը գնտական ըլլալով՝ ոսպնաձևի տեղ կը բռնէ, իսկ մեծ երեսը հայլի կը ձեանայ. երբոր դրսի առարկային շառաւիղները հատուածակողմին մէջէն կ'անցնին ու կը զարնեն անոր վրայ, անկէ ալ կ'իջնան՝ գնտական կողմէն կ'ելլեն ու սնտուկին մէջ կը նկարուին:



ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պ ջ ը ն Ի :

Պ ջ ը ՈՒՆԻՆ երկայնութիւնը սովորաբար իրեք ոտնաչափ կ'ըլլայ. պոչին երկու ծայրը բարակ ու մէջտեղը տասուերկու մատնաչափ հաստ է, տակի կողմը տափակ, վրան քիչ մը ուռած. պոչին վրայ մազի տեղ՝ ձկան պէս թեփ՝ ունի: Վրայի մորթը կակուղ, ողորկ ու փայլուն, գոյնն ալ սովորաբար խահվէի գունով. երբեմն սև կ'ըլլայ, երբեմն ալ բոլորովին ճերմակ: Լկանջները անանկ կարճ են որ հազիւ կ'երևնան. առջևի ոտուրները կարճ են ու մկան ոտքի կրնամանին, ետևի ոտուրները լայն, ու մատուրները մաշկով իրարու միացած: Լկուները խիստ սուր ու ամուր ըլլալուն՝ փայտ ալ կը կտրեն. իրենց կերակուրն ալ ծառի կեղև ու տերև է:

Եւ կենդանւոյս պէս ճարտար ու խելք բանեցրնող կենդանի չկայ կըսեն: Լկանի բաներ կ'ընեն որ կարծես թէ մէջերնին խօսք դրբը են որ իրա-

1 Vincent Chevalier.
2 1 տ . և 7 շ . Castor. ՏՃ . Գ . Կ . Կ . Կ . Կ . Կ .
3 փ . Կ . :